

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ ՉԷ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Posted on May 9, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



«Սուտ վկայություն մի տուր»

Տիգրան Փաշաբեգյան, 9 Մայիս 2014

Դատարանների գործը չէ՛ քաղաքական որոշումներ կայացնելը: Այդ գործընթացը դուռ կարող է բանալ երկու տեսակի երեւոյթների առջեւ, մասնավորապէս՝

1. համընդհանուր վստահության ճգնաժամ առաջացնել միջազգային իրավական համակարգի եւ արդարադատության նկատմամբ,
2. մի շարք պետությունների ու ժողովուրդների ստիպել խորհելու ձեւավորել արդարադատության մեկ այլ համակարգ՝ ծագող խնդիրներին արդարացի լուծումներ գտնելու նպատակով:

«Սուտ վկայություն մի տուր»

Տիգրան Փաշաբեգյան, 9 Մայիս 2014

Դատարանների գործը չէ՛ քաղաքական որոշումներ կայացնելը: Այդ գործընթացը դուռ կարող է բանալ երկու տեսակի երեւոյթների առջեւ, մասնավորապէս՝

1. համընդհանուր վստահության ճգնաժամ առաջացնել միջազգային իրավական համակարգի եւ արդարադատության նկատմամբ,
2. մի շարք պետությունների ու ժողովուրդների ստիպել խորհելու ձեւավորել արդարադատության մեկ այլ համակարգ՝ ծագող խնդիրներին արդարացի լուծումներ գտնելու նպատակով:

Խնդիր կա պարզելու, թե ինչն^օւ Հայերի ցեղասպանության դատապարտման ժամանակակից ահազանցող գործընթացին զուգահեռ զանազան հեղինակավոր դատական ատյաններ իրավականի փոխարեն սկսեցին քաղաքական որոշումներ կայացնել: Դրանցից մեկը Ֆրանսիայի Սահմանադրական դատարանն էր, որ խոսքի ազատության պատրվակով 2012-ին արգելափակեց Ֆրանսիայի Սենատի ընդունած Հայերի ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող օրինագիծը: Քաղաքականացված այդ նույն կեղծիքը 2013-ին կրկնեց Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը: Հիշեցնենք նաեւ, որ 2013-ին Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը մերժեց քննության վերցնել Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի կողմից ներկայացված հայցը Հայկական Ջուղայի 5000 խաչքարերի ոչնչացման փաստի վերաբերյալ:

Դյուրահավատ չենք, որ կարծենք թե այստեղ էական դեր ու նշանակություն են ունեցել քաղաքական ճնշումները եւ կամ կաշառքը: Ամենեւին, այս գործընթացը ցույց է տալիս, որ արեւմտյան շատ որոշակի շրջանակների զինանոցում ցեղասպանության գործողությունն ու ցեղասպանության գործիքը մնացել է որպէս ռազմա-քաղաքական շահեր հետապնդելու եւ իրականացնելու միջոց, գործիք: Այդպէս են վարվում Սիրիայում, երբ մարդու իրավունքների զանգվածային խախտումների եւ քեսապի հայերի բռնազաղթի կապակցությամբ... լռում են:

Այդօրինակ քաղաքական որոշումներ կայացնելու դրդապատճառները երկուսն են՝

ա) Թուրքիայի եւ Ադրբեջանի համար ապահովել «առավելագույն նպաստավոր պայմաններ» ապագայում եւս հանցագործություններ իրականացնելու՝ հայության, Հայաստանի (եւ մյուս հարեւանների, օրինակ՝ Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Իրանի...) նկատմամբ, հիմնված ռազմա-քաղաքական ագրեսիվ քարտեզագրումների ու ծրագրերի վրա... ,

բ) եւ առաջին խնդիրն անվրեպ իրականացնելու համար հայության եւ տարածաշրջանի այլ ժողովուրդների մեջ անվստահություն ձեւավորել ինչպէս միջազգային եւ ներպետական, այնպէս էլ ընդհանրապէս արդարադատության համակարգի նկատմամբ, ետին պլան մղելով նրանց միանգամայն բնական ձգտումները՝ իրենց խնդիրների հանդէպ ուժային - քաղաքական պարտադրված լուծումների փոխարեն՝ իրավական արդարացի լուծումներ գտնելու:

Միջազգային դատական ատյանների կողմից իրավականի փոխարեն քաղաքական որոշումներ կայացնելու այս վտանգավոր եւ, ինչու ո՛չ, հանցագործ քաղաքականությունը կարող է նորանոր տարածաշրջաններ, պետություններ ու ժողովուրդներ ներքաշել լայնածավալ անօրինականության ու քառսի, ցեղապաշտության ու այլատյացության, ազգամիջյան եւ միջկրոնական դիմակայության ու ցեղասպանության հորձանուտը:

Հայությանն ու Հայաստանին անհրաժեշտ է ինչպէս հարկն է զգոն ու պատրաստ լինել այդ ամենին, որդեգրելով քաղաքակրթական սկզբնառու առաքելության եւ պաշտպանության բնական իրավունքի սկզբունքներին ու մեխանիզմներին ապավինելու անկասելի հանձնառություն:

Տիգրան Փաշաբեգյան

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության վարչապետ

09.05.2014 թ.

